ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՄՐԳԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մրգաշեն համայնք,1-ին փ. շ. 22 mrgashen.kotayq@mta.gov.am

թիվ 301
23 հոկտեմբերի 2017թ.

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Կ.ԳՈՒԼՈՅԱՆ

Հարգելի պարոն Կ. Գուլոյան

Ի պատասխան Ձեր 2017 թվականի ապրիլի 14-ի թիվ 01/ 15.1/1607-17 գրության Ձեզ ենք ուղարկում Մրգաշեն համայնքի ղեկավարի որոշումները։

Առդիր 3 թերթ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԱՐԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱ Ն Ի ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մրգաշեն համայնք,1-ին փ. շ. 22
mrgashen.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«16» հոկտեմբերի 2017 թվականի N 102

## ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՇԵՆՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 -րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ համաձայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի պահանջներով՝ *որոշում եմ.*

Մրգաշեն համայնքի սեփականություն հանդիսացող 2Փ 1Փկղ 2 հասցեում գտնվող մսուր-մանկապարտեզի շենքը (սեփականության վկայական 2173822 ) անհատույց օգտագործման իրավունքով հանձնել <<Մրգաշենի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԱՐԱՄՅԱՆ

2017թ. հոկտեմբերի 16
Մրգաշեն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մրգաշեն համայնք,1-ին փ. շ. 22
mrgashen.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«18 » հոկտեմբերի 2017 թվականի N 103

## ՌԱԶՄԻԿ ԱՐԱՄՅԱՆԻ ԽՆԴՐԱՆՔԸ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի 22.1 կետի պահանջները և այն հանգամանքը, որ Մրգաշեն համայնքի 2-րդ փողոց, 12 հասցեում գտնվող 0.1094հա մակերեսով բնակելի կառուցապատման նշանակության, 0009-0025 ծածկագրով իր սեփական հողամասի վրա Ռազմիկ Արամյանի կողմից ինքնակամ կառուցված բնակելի տունը արտաքին չափերով 149.6քմ, պարիսպ 1.2քմ և կաթսայատունը 4.7քմ ընդհանուր մակերեսներով չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60 հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օտարման կամ անվտանգության թաղամասի կառուցապատման պլաններին և դրա պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանված շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը՝ *որոշում եմ*

1. Կոտայքի մարզի Մրգաշեն համայնքի 2-րդ փողոց 12 հասցեում գտնվող սեփականության իրավունքով Ռազմիկ Արամյանին պատկանող հողամասում ինքնակամ կառուցած բնակելի տունը 149.6քմ, պարիսպ 1.2քմ և կաթսայատունը 4.7քմ մակերեսներով ճանաչել օրինական:
2. Ռազմիկ Արամյանի կողմից նախատեսված վճարներն չեն գանձվում համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի 22.1 կետի պահանջների, քանի որ նշված շինությունները կառուցվել են 1980-1981թվականներին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԱՐԱՄՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մրգաշեն համայնք,1-ին փ. շ. 22
mrgashen.kotayq@mta.gov.am


### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«19» հոկտեմբերի 2017 թվականի N 104

### ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի պահանջներով և համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 38-Ն որոշմամբ
*որոշում եմ.*

Մրգաշենի համայնքապետարանի աշխատակազմին տալ պարգևատրում յուրաքանչյուրին հետևյալ չափով.

1. Արամյան Արամայիս 363 000/երեք հարյուր վաթսուներեք հազար /դրամ
2. Ղազարյան Շողիկ 210 100/երկու հարյուր տաս հազար հարյուր / դրամ
3. Սայադյան Սայադ 164 000/մեկ հարյուր վաթսունչորս հազար/դրամ
4. Գրիգորյան Նարգիզ 185 000/հարյուր ութսունհինգ հազար/ դրամ
5. Վարդանյան Ասյա 88 000/ութսուն ութ հազար / դրամ
6. Սայադյան Ջուլիետա 86 900/ութսունվեց հազար ինը հարյուր/ դրամ
7 Սայադյան Երանուհի 85 800/ութսունհինգ հազար ութ հարյուր/ դրամ
8. Թարվերդյան Խոսրով 96 680/իննսունվեց հազար վեց հարյուր ութսուն/դրամ
9.Գրիգորյան Փիրուզ 72 800/յոթանասուներկու հազար ութ հարյուր/դրամ
10. Հովհաննիսյան Մանկիշ 100 000/մեկ հարյուր հազար/դրամ
11. Արամյան Միհեր 96 000/իննսունվեց հազար/դրամ

Ընդամենը 1.548.280 (մեկ միլիոն հինգ հարյուր քառասունութ հազար երկու հարյուր ութսուն) դրամ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ԱՐԱՄՅԱՆ

2017թ. հոկտեմբերի 19
գ.Մրգաշեն